Երևանի Փոքր Կենտրոնի դիագրամին ուղղված մեկնաբանություններ

1. այն ընդգրկում է Թամանյանի 1924 հատակագծի հիման վրա կառուցապատված տարածքների գերակշռող մասը
2. այն հաշվի է առնում 1988թ. եւ 2006թ. իրականացված Երեւան քաղաքի պատմամշակութային հուշարձանների պահպանման նախագծերի ընթացքում արված ուսումնասիրությունների արդյունքում վերհանված պահպանման գոտիները
3. այն ընդգրկում է նախահեղափոխական Երեւանի, նախապատերազմյան եւ հետպատերազմյան տարիների ընթացքում կառուցված շենքերի եւ համալիրների մեծ մասը:

Կարեւոր ենք համարում նշել, որ այս հատակագիծ-դիագրամը անպայմանորեն կարիք ունի հետագա ճշգրտումների եւ լրացումների:

Նշում ենք մի քանի հիմնական փողոցների եւ նրանցով կազմավորված քաղաքաշինական համալիրների, քաղաքային միջավայրեր ներկայացնող տարածքների ցուցակը:
ա) Աբովյան փ. Կորյունից մինչեւ Թումանյան
բ) Տերյան փ. Կորյունից մինչեւ Սայաթ-Նովա
գ) Հանրապետության փ. Սայաթ-Նովայից մինչեւ Վարդանանց, Տպագրիչների հատվածով
դ) Նալբանդյան փ. Խանջյանից մինչեւ Սայաթ-Նովա
ե) Թումանյան փ. Նալբանդյանից մինչեւ Խանջյան
զ) Զաքիյան փ. Ամիրյանից մինչեւ Խորենացի
է) Ղազար Փարպեցի փ. Թումանյանից մինչեւ Պուշկին հետո դեպի Մաշտոց: Այստեղ կարելի նաեւ նշել Արվեստագետների թաղամասը՝ Սարյան, Թումանյան, Փարպեցի, Պուշկին ամբողջությամբ
ը) Մոսկովյան, Թումանյան, Մաշտոց, Սայաթ-Նովա Վերնիսաժի այգով, Զորյան, Սպենդիարյան փողոցներով:
թ) Իսահակյան փ. Տերյանից մինչեւ Բաղրամյան